

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ «ՎԱՐՔԻ» ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Փ. Փ. ԱՆԹԱԲՅԱՆ

«Պատմութիւնն վասն սրբոյն Սահակայ Հայրապետին եւ Մեսրովբայ վարդապետին» բնագիրը առաջին անգամ հրատարակվել է 1853 թ. Սոփերքի Բ հատորում, իբրեւ անհայտ հեղինակի աշխատություն¹, իսկ երկրորդ անգամ՝ մեր կողմից 1964 թ. «Բանբեր Մատենադարանի» VII համարում, առաջին հրատարակության հետ համեմատված և ընդարձակ առաջաբանով²։ Զեռագրերում պահպանված խորագրի ու ձեռագրական մի շարք տվյալների հիման վրա կարծիք ենք հայտնել, որ այն պատկանում է XIII դարի անվանի մատենագիր Վարդան Արևելցու գրչին։ Այս հոգվածն արդեն լույս էր տեսել, երբ մեզ հայտնի դարձավ մի երկրորդ ձեռագիր (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 5857), որը նույնպես վկայում է, թե այդ բնագիրը իրոք Վարդան Արևելցու գրչի արգասիքն է³։ Բացի այդ, մեզ հայտնի է դարձել, որ Սոփերքում տպագրվածը առնված է Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի N 207 ձեռագրից։ Այս ձեռագրում է գտնվում «Լուսավորչի թոռներին»՝ Պահլավունի կաթողիկոսներին նվիրված մի ներբող ևս, որը ավելի վաղ ընդօրինակված ձեռագրերի իսկ վկայությամբ՝ անտարակույս, Վարդան Արևելցու երկն է. ինչպես վերոնշյալ բնագրի⁴, այնպես էլ սույն ներբողի խորագրում պակասում է հեղինակի անունը։ Վարժում ենք, որ հեղինակի անվան բացակայությունը եթե տվյալ ձեռագրում գտնվող սույն ներբողի համար ապացույց չէ, որ դրա հեղինակն անհայտ է, ապա հիշյալ բնագրի համար էլ ճիշտ չի լինի ասել, որ այն անանուն հեղինակի գործ է, քանի որ առաջինը՝ բազմաթիվ, իսկ երկրորդը՝ մեզ հասած երկու ձեռագրերի էլ վկայությամբ պատկանում են Վարդան Արևելցուն։ Այս կարգի դեպքեր շատ ու շատ են մեր ձեռագրերում և ձեռագրերի հետ աշխատող ամեն ոք, նույնիսկ ոչ մասնագետն էլ գիտե, որ որևէ հեղինակի մի գործը մի շարք ձեռագրերում կարող է իր խորագրում պահել հեղինակի անունը, բայց մի շարք ձեռագրերում՝ ոչ։ Այնպես որ, թեև այն ձեռագրում, որտեղից վերոնշյալ բնագիրը առնված և հրատարակված է Սոփերքի Բ հատորում, այն առանց հեղինակի անվան է, բայց անհայտ կամ անանուն հեղինակի գործ չէ, այլ Վարդան Արևելցունն է։ Այդ բնագիրը մեզ է հասել, ինչքան

¹ Սոփերք, Բ, Վենետիկ, 1853, էջ 6։

² «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 377—397։

³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5857, էջ 111ա։

⁴ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951, էջ 969։ Ի դեպ, Վ. Արևելցին ինքը ևս վկայում է այս. տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1518, էջ 172։

⁵ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... Ա, Վենետիկ, 1914, էջ 163ա, 223բ։

առ այսօր հայտնի է, 3 ձեռագրերում, որոնք միաբերան այն ընծայում են՝ Վարդան Արևելցուն։ Ուրեմն, մինչ այժմ եղած բոլոր փաստերը միայն այն հիմքն են տալիս, որ այդ բնագիրը պատկանում է Վարդան Արևելցու գրչին։

«Հայագիտության մի շարք հանգուցային հարցերի խաչմերուկում» գրտնրվող այս բնագրի մասին վերջերս «Բանբեր Երևանի համալսարանի» № 2-ում մի հոդված է հրապարակել Խ. Թորոսյանը՝ «Սահակ Պարթևի վարքը» և նրա հեղինակը» վերնագրով⁶։ Սկզբից և էթ ասենք, որ հոդվածագիրը իր եղրակացությունները հիմնում է բացառապես տարբեր բանասերների վաղուց արդեն հայտնի զանազան ենթադրությունների ու տպագիր աղբյուրների վրա, չի նշում ոչ մի ձեռագրական կամ բնագրական տվյալ, որը նոր լիներ և փաստական որևէ կշիռ ներկայացներ այս հարցում։

Խ. Թորոսյանը իր հոդվածն սկսում է «Սոփերքում հրատարակված տարբերակի... հորինման ժամանակագրական վերին սահմանը որոշելու»՝ ինդրով և դիմում է հետևյալ քայլին. ա) բերում է Հ. Աճառյանի կարծիքը, բ) Սոփերքի տարբերակը համեմատում է Կորյունի, Ս. Խորենացու, Ղ. Փարպեցու և Հ. Դրասխանակերտցու համապատասխան աշխատությունների հետ և եղրակացնում. «Ուրեմն Ա բնագիրը կաղմվել է ամենաուշը IX դարում»⁸։

Պանոթանանք հոդվածագրի հիշյալ երկու հիմքերին։

Հ. Աճառյանը, ժամանակին նկատելով Հ. Դրասխանակերտցու պատմության համապատասխան հատվածի և Սոփերքում հրատարակված տարբերակի առնչությունը, ենթադրել է, «որ օգտվողը Դրասխանակերտցին է»⁹։ Ինչու է «Ռրովհետև տեղ-տեղ Անանունը (իմա՝ Սոփերքի տարբերակի հեղինակը—Փ. Ա.) մեծ-մեծ ողբեր, տեսություններ, կրոնական կամ բանաստեղծական մտածություններ կավելցնե»¹⁰, իսկ երբ դրանք չկան Դրասխանակերտցու պատմության հիշյալ հատվածում (ԺԴ գլուխ), մնացածը դրանց միջև՝ «նույնական» է։

Ո՛չ հարգելի գիտնականը, ոչ էլ հոդվածագիրը որևէ ուղղակի խոսք չեն ասում այն մասին, թե ինչու այդ «բանաստեղծական մտածությունները» չէին կարող պատկանել Դրասխանակերտցուց հետո եկած հեղինակին։ Դեռ ավելին։ Մեծանուն գիտնականը թեև այն կարծիքին է, որ հիշյալ տարբերակը նախորդել է Դրասխանակերտցուն, բայց իր խոսքի մեջ գրում է, որ «Անանունը... բանաստեղծական մտածություններ կավելցնե»։ Մեր կարծիքով փաստը, իրողությունը բացատրված է ճիշտ, բայց եղրակացությունն արված է սխալ։ Ճիշտ է, որ եթե «բանաստեղծական մտածություններն» ու այդ կարգի «տեսությունները» հանվեն հիշյալ տարբերակից, մնացածը նման է Դրասխանակերտցու պատմության ԺԴ գլխին, որովհետև անանուն հեղինակը (ըստ մեզ՝ Վարդան Արևելցին) օգտվել է Դրասխանակերտցուց և նրա խոսքերը (ԺԴ գլուխ) հյուսել իր խոսքերին։ Օգտվող հեղինակները, այդ թվում նաև մեր հոդվածագիրը, իրենց երկերի բնագրերը չեն կաղմում և չեն էլ կարող կաղմել նախորդ աղբյուրները միայն սանրելու կամ նոսրացնելու միջոցով, մանավանդ, երբ խոսքը

6 Խ. Թորոսյան, «Սահակ Պարթևի վարքը» և նրա հեղինակը, «Բանբեր համալսարանի» Երևան, 1967, № 2, էջ 201—211։

7 Նույն տեղում, էջ 202։

8 Նույն տեղում, էջ 203։

9 Նույն տեղում, էջ 201։

10 Նույն տեղում։

որևէ մեջբերման մասին չէ, այլ մի ամբողջ բնագրի, սովյալ ղեպում՝ մի ընդարձակ գլխի, բայց հակառակը՝ ինչքան ուղեք. Օգտավող հեղինակն է նախորդի խոսքերը քաղում և հյուսելով իր խոսքերին՝ նոր բնագիր կազմում: Այս ոչ միայն փաստ է, այլև գրական-բանասիրական օրենք և անցյալում, և այժմ: Բացի այդ, Դրասխանակերտցին աղբյուրներից օգտվելու իր ուրույն, սեփական եղանակն ունի: Նա չի սիրում բառացի քաղվածքներ անել: Եթե նա աղբյուրներից որևէ պատմական տեղեկություն վերցնում է, ապա անպայման ստեղծագործորեն մշակելուց հետո է այն վերարտադրում: Այս հարցում նա մեր շատ պատմիչներից ավելի բժախնդիր է: Երբ նա ամեն անգամ այս կերպ է վարվում, հազիվ թե սովյալ ղեպում գրեթե ամբողջ մի գլուխ քաղեր այդ բնագրից, եթե նույնիսկ այն գրված լիներ ավելի վաղ¹¹: Ուստի ավելի տրամաբանական և ավելի իրական է, որ ոչ թե Դրասխանակերտցին է օգտվել Անանուից, այլ՝ հակառակը:

Սակայն Հ. Աճառյանը ունի մեկ այլ պատճառարանություն ևս, որը վկայակոչել է իս. Թորոսյանը. «...Այս թվականին (850—Փ. Ա.) կհամարի նաև Անանունին բազմակրկնող լեզուն, նման Նարեկացվույն և ուրիշներու գրություն, որոնց մեջ կտեսնվի արաբական ոճին ազդեցությունը»¹²: Խոսքը վերաբերում է մակդիրների, ստորոգյալների, շաղկապների, մակբայների, գերատեսչների «բազմակրկնությանը» հիշյալ տարբերակի մեջ:

Բայց ինչու և ինչպե՞ս է, որ այս «բազմակրկնությունը» նաև հոգվածագրի կողմից դիտված է որպես ապացույց այն բանի, որ այդ տարբերակը չէր կարող ավելի ուշ գրվել, քան 850 թ., կամ՝ IX դարը¹³: Մի՞թե ոճական այդ երևույթը ավելի ուշ, ասենք XIII կամ հետագա դարերում չի հանդիպում: Կարող ենք ամենայն վստահությամբ հայտարարել, որ միայն Վարդան Արևելցու ներբողներից կարելի է այստեղ հարյուրավոր և ավելի տողեր բերել, որոնք անվերապահորեն կհաստատեն, որ այդ «բազմակրկնությունը» շարունակվել, նույնիսկ ավելի է խորացել նաև X դարից հետո և որ այն ոճական արմատական հատկանիշ է Վարդան Արևելցու մանավանդ գեղարվեստական բնույթի երկերում: Եւ նշում է նաև Հ. Աճառյանն ինքը, երբ գրում է, թե այդ «բազմակրկնող լեզուն» Անանունը կիրառել է «նման Նարեկացվույն և ուրիշներու»¹⁴, իսկ Նարեկացին և ուրիշները, համենայն դեպս, Դրասխանակերտցուց և IX դարից հետո են գրել: Ուստի, այս պատճառարանությունը ևս հիմք չի տալիս ասելու, թե Սոփերքում լույս տեսած տարբերակը «ամենաուշը IX դարում է կազմվել»:

Ինչ վերաբերում է սույն տարբերակի համեմատությունը Կորյունի, Խորենացու, Փարպեցու և Դրասխանակերտցու համապատասխան երկերի հետ¹⁵, ապա պետք է ասել, որ այստեղ էլ հոգվածագրի օգտին ասելիք ոչինչ չկա: Ինչպես հայտնի է, համեմատությունն էլ պետք է ունենա իր տրամաբանությունը և, մանավանդ, իր բանասիրական հիմքը, որը առաջին հերթին կայանում է համեմատվող բնագրերի ժամանակադրական հաջորդականությունը ճշ-

11 Մ. Արևելյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա. Երևան, 1944, էջ 438.

12 «Բաների համալսարանի», 1967, № 2, էջ 201:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում, էջ 202—203:

գրքատորեն պահպանելու մեջ: Բայց հ. Թորոսյանը այլ կերպ է վարվել: Առաջ ստույգ պատճառաբանության նա Սոփերքի տարբերակը գետեղել է Հ. Դրասխանակերտցու պատմությունից առաջ. չէ՞ որ նմանության գեղարվեստական օգտվողը, ինքնըստինքյան, վերջինը, այսինքն՝ Դրասխանակերտցին կլինի, իսկ այնուհետև էլ հաստատված կհամարվի. որ Անանունի վերոհիշյալ տարբերակը չէր կարող գրվել IX դարից հետո: Տեսեք նաև, թե ինչ է եղրակացրել հոգվածագիրը հիշյալ համեմատությունից. «Մի կողմից, ինչպես տեսնում ենք, Դրասխանակերտցին չի օգտվել ո՛չ Կորյունից, ո՛չ հորենացուց և ո՛չ էլ Փարպեցուց, մյուս կողմից՝ անվիճելի է, որ Սահակի ու Մաշտոցի ամբողջ պատմությունը նա պետք է քաղած լինի նախորդ մատենագիրներից: Ուստի ակնհայտ է, որ Դրասխանակերտցին է օգտվել Ա. Բնագրից (նկատի ունի Սոփերքում հրատարակված տարբերակը — Փ. Ա.) և ոչ թե վերջինիս հեղինակը՝ Դրասխանակերտցուց: Եթե այդպես է, ուրեմն Ա. Բնագիրը կազմվել է ամենաուշը IX դարում»¹⁶: Սակայն այդպես չէ: Նախ ասենք, որ համեմատության համար հ. Թորոսյանի փակ բերած հատվածներից շատ հստակ երևում է, որ Դրասխանակերտցին օգտվել է «նախորդ մատենագիրներից»՝ Կորյունից, հորենացուց և Փարպեցուց: Դրասխանակերտցու պատմությունից բերված հատվածում կա՝ պատմական որևէ մանրամասն, որը չլինի «նախորդ մատենագիրների» երկերից բերված տվյալ հատվածներում: Չկա: Էլ օգտվելը ինչպե՞ս է լինում: Անպայման ըստ րառացի: Սակայն այդ էլ տվյալ գեղարվեստական նշմարելի է, և եթե Սոփերքի տարբերակը մեզ հասած էլ չլիներ, մենք կարող էինք ասել, որ Դրասխանակերտցին անպայման օգտվել է հիշյալ «նախորդ մատենագիրներից»: Ուստի «ակնհայտ» չէ, որ «Դրասխանակերտցին է օգտվել Ա. Բնագրից»: Կարող էր հակառակը լինել: Ընդհանրապես վերջինն է, ինչպես արդեն բիշ վերը ցույց տվինք: Այնպես որ «Ա. Բնագիրը» կարող էր գրվել նաև IX դարից հետո: Ի դեպ, «Ա. և Բ. Բնագրերի» մասին: Տարօրինակ է և սխալ միեկնույն բնագրի երկու տարբերակները դիտել իրեն մեկը մյուսից անկախ բնագրեր: Ինչպես շատ որոշակի երևում է «Բանբեր Մատենադարանի» 1964 թ. 7-րդ համարում այս երկուսի մեր համեմատական հրատարակությունից, դրանք միեկնույն բնագրի տարբերակներն են միայն, ստեղծված հեղինակի կամ, թերևս, մեկ այլ հետազոտական անձնավորության կողմից¹⁷, ինչպես պատահել է շատ այլ գեղարվեստ: Ուստի դանդ ենք առնում անդրադառնալ հոգվածում բերված Ա. և Բ. «Բնագրերի» համեմատությանը և հ. Թորոսյանի դրանց մեկը մյուսից բխեցնելու ապարդյուն ջանքերին, մանավանդ, որ այդ տվյալ գեղարվեստ առանձին նշանակություն էլ չունի: Միայն կուղենայինք հիշեցնել, որ այդ կապակցությամբ հ. Թորոսյանի այն հետևությունը, թե իբր «Բ. Բնագիրը չի կազմվել և չէր կարող կազմվել Դրասխանակերտցու պատմության հիմամբ»¹⁸, սոսկ հայտարարություն է: Ինչպես տեսանք՝ կարող էր և, ինչպես բիշ վերը նշված ձև.

¹⁶ Նույն տեղում, էջ 203:

¹⁷ «Անանուն» անվանված հեղինակը շատ է օգտվել նախորդ «պատմություն»-ներից համաձայն իր իսկ վկայության: Բայց Հ. Դրասխանակերտցու երկից նա քաղել է վերոհիշյալ բնագրաձևի հատվածը և անշան միջամտություններով գետեղել իր այս բնագրում: Ըստ երևույթին, ավելի ուշ, իր սույն ստեղծագործությանը (Սոփերքում տպված տարբերակին) անդրադառնալիս նա մի քանի խմբագրական միջամտությունների ժամանակ նկատելով, որ Հ. Դրասխանակերտցու պատմությունից առնված հատվածը իբր քաղվածք շատ է աչքի զարնում, հանել է:

¹⁸ «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 203:

ռազրական փաստերն են միաբերան վկայում, կազմվել է XIII դարում՝ Վ. Արևելցու կողմից, թեև ոչ միայն «Դրասխանակերտցու պատմության հիմամբ»:

«Այժմ փորձենք որոշել Արևազրի հորինման ժամանակազրական ստորին սահմանը»¹⁹, — ասվում է հոգվածում: Ծանոթանալով հոգվածագրի այս փորձին ևս: Այս դեպքում էլ նա դիմում է «Արևազրական համեմատության» և, խնդիր ունենալով, ճիշտ է անում, բայց դժբախտաբար սխալ եզրակացության է հանգում: «Նա իրավացի է, որ «...քիչ չեն նաև դեպքերը, երբ Փարպեցու և Խորենացու պատմություններն ու Արևազրը (ավելի շուտ վերջին երկուսը) ընդհանուր առմամբ, իսկ տեղ-տեղ բառացի, նույն-սենում են»²⁰: Համեմատության համար բերված համապատասխան հատվածները հաստատում են այդ: Բայց ահա նաև գնում է հեռուները և դեմ առնում «Խորենացի-Փարպեցի հարաբերության» հարցին, հարակից մի շարք «հանգուցային» խնդիրների ու, վերջապես, «Սահակի վարքի» մոթ ու կնճռոտ պրոբլեմին: Հետևենք հոգվածագրին քայլ առ քայլ և տեսնենք, թե ո՞ւր է հասնում նա: Մենք ևս սկսենք «Խորենացի-Փարպեցի հարաբերության» շատ կարևոր հարցից: Խ. Թորոսյանը այս առիթով հայտնում է, որ «ընդունված ձևով դատելով պետք է, ուրեմն, ասենք, որ Փարպեցին օգտվել է Խորենացուց, իսկ Անանունը՝ այս երկուսից: Սակայն կան փաստեր այլ կերպ դնելու ոչ միայն Անանունի աղբյուրների, այլև Խորենացի-Փարպեցի հարցը»²¹: Անցնենք առաջ և ասենք, որ Խ. Թորոսյանի կարծիքով և՛ Մ. Խորենացին, և՛ Ղ. Փարպեցին ոչ թե մեկը մյուսից են օգտվել, այլ ունեցել են մի երրորդ աղբյուր, որը ոչ ավելի և ոչ էլ սակաւ «Սահակայ պատմություն» է: Ի հաստատումն այս «հայտնության» նա հետևյալ կերպ է դատում.

1. Փարպեցու կրտսեր լինելը ապացույց չէ այն բանի, որ նա օգտվել է Մ. Խորենացուց²²:

2. Փարպեցին «իրեն համարում է երրորդ պատմագիր Ագաթանգեղոսից ու Բյուզանդից հետո, այլ կերպ՝ հայտնում է, որ ինքը Խորենացու պատմությանը ծանոթ չէ»²³:

3. «Բացի դրանից, Փարպեցին Սահակի մասին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք չկան Խորենացու Պատմության մեջ, որից կարողանալքսողել: Այս հանգամանքն էլ իր հերթին ենթադրել է տալիս Սահակի մասին մի աղբյուր, զատ Կորյունից ու Խորենացուց, որ ունեցել է Փարպեցին»²⁴:

Առաջին կետի վերաբերյալ նշենք, որ բանասիրության մեջ ոչ ոք չի ասել, թե Փարպեցին օգտվել է Խորենացուց սոսկ նրա համար, որ նա վերջինից կրթություն է: Բայց, երբ նկատել են, որ նրանք մեկը մյուսից օգտվել են, բնական է, որ պիտի մտածեին, թե ո՞վ ումից հետո է ժամանակազրականորեն, որպեսզի հայտնի լիներ օգտվողը: Միայն այս դեպքում են բանասերները նկատի առել Փարպեցու կրտսերությունը և, իհարկե, ճիշտ են արել: Ուրեմն, այս առաջին կետի հիշատակությունը հոգվածում առնվազն տեղին չէ:

¹⁹ Նույն տեղում, էջ 204:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 205:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 205:

²⁴ Նույն տեղում, էջ 206:

Այժմ երկրորդ կետի մասին: Եթե Ղ. Փարպեցին իր «Պատմութիւն Հայոցի» վերաբերյալ ունի «երրորդ պատմութիւն» խոսքը, ապա չէ՞ որ դարձյալ ինքն է քիչ հետո պարզ ու որոշակի դրում. «Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն հայոց անցի, յորոց ըստ յերկար ընթերցողութեան զտի ի նոցանէ դժամանակաց և զդարուց աշխարհիս հայոց բազմադիմի յեղափոխութիւնս, յստուգ և յանսխալ կարգաւորութենէ առաջին դրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոցց մեզ երանելին Լեւոնյանցեաց...»²⁵: Եւ, ինչպէս մեծանուն Մ. Արեղյանն է հաստատել, այդ «ճառս» բառը վերաբերում է նաև մեր պատմիչների երկերին²⁶:

Կարելի էր, իհարկե, և. Թորոսյանի առաջ քաշած այս երկրորդ կետը հաշվի առնել մասամբ, եթե միայն Փարպեցին իրապէս և անվիճելիորեն հիշյալ երկու պատմիչներից բացի չգիտենար ուրիշներին և չօգտվեր նրանցից: Բայց այս ևս այդպէս չէ: Նա օգտվել է ոչ միայն Մ. Խորենացուց, նա օգտվել է նաև Շղիշեցի, Կորյունից և, եթե ճիշտ լինել և. Թորոսյանը, թե իբր անպայման եղել է «Սահակայ պատմութիւն», ասա նաև՝ դրանից: Այսպիսով, հոգովածագրի տըրամաբանությամբ առաջնորդվելիս՝ պիտի ընդունենք, որ Փարպեցին «իրեն համարում է» մեր ոչ թե III, այլ VII պատմիչը: Այս դեպքում իրապէս էլ դրբվելու է Փարպեցու «ստուգութեան» հարցը, որ այնքան զուրկուրում է հոգովածագրի և. անշուշտ, գտնում, թե «կեղծիքի մասին խոսք լինել չի կարող»²⁷: Ի դեպ մենք իրապէս համաձայն ենք դրան, բայց իրապէս էլ մերժում ենք այն, որ նա իբր թե իրեն մեր երրորդ պատմագիրն է համարում, որը թեև ճանաչում է նաև նախորդ մեր պատմիչներին, բայց չի օգտվում նրանցից: Ըիշտ չէ և այն, թե իբր Ղ. Փարպեցին «հայտնում է, որ ինքը Խորենացու պատմութեանը ծանոթ չէ»²⁸: Այս խնդրում փրկարար միջամտութիւն չեն կարող ունենալ նաև և. Թորոսյանի տողատակ տված ծանոթութեան հետևյալ խոսքերը. «Եւ իբր, Խորենացին իր Պատմութեանը գրել է V դ. 80-ական թվականներին, Փարպեցին՝ 90-ական, տարբերութեանը շուրջ մեկ տասնամյակ է: Այդքան կարճ ժամանակամիջոցում Խորենացու Պատմութեանը հաղիվ թե անհրաժեշտ չափով բազմացված ու տարածված լինելը»²⁹: Ըիշտ է, որ մեր մատենագրութեան մեջ թերևս և ոչ մի գիրք «անհրաժեշտ չափով բազմացված ու տարածված» չի եղել, բայց օգտակար չափով՝ Կենչան ուղեք: 10 տարին, ինչպէս պատմում են մեր ձեռագրերը, կարճ ժամանակամիջոց չէ մի բնագրի բազմացման համար: Չմոռանանք, որ V դարում այդ բնագրերը հատ ու կենտ էին և դրանց բազմացումը ավելի զլուրին գործ էր: Չմոռանանք նաև, որ և՛ Խորենացին, և՛ Փարպեցին ապրել և գործել են միևնույն վայրում և Խորենացու Պատմութեան մեկ օրինակն էլ. նույնիսկ ինքնագիր օրինակն էլ կարող էր հայտնի լինել Փարպեցուն և նա կարող էր հենց այդ օրինակից էլ օգտվել: Այնպէս որ հոգովածագրի այս պատճառաբանութեանը ևս չչինչ չի ասում այն մասին, որ Ղ. Փարպեցին իբր թե չի օգտվել Խորենացու Պատմութեանից: Ցույց տալու համար, թե Փարպեցին չի օգտվել Խորենացու Պատմութեանից, և. Թորոսյանը վկայակոչում է այն փաստը, որ Փարպեցին թուրքիկ մի քանի խոսք է ասում երկրի բաժա-

²⁵ Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904, էջ 2:

²⁶ Մ. Արեղյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Ա., էջ 321:

²⁷ «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 206:

²⁸ Ետյն տեղում, էջ 205:

²⁹ Ետյն տեղում:

նումից մինչև Սահակ ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ և պատմության մասին ասելիք չունենալով, գեղեցիկ և հուզիչ խոսք է ասում բնության մասին: «Ի՞նչն է պատճառը. արդյոք ո՞չ այն, որ ծանոթ չլինելով հորենացու պատմությանը և չունենալով գրավոր աղբյուր, շտապել է հասնել այնպիսի շրջանի, որից գրավոր աղբյուր ուներ»³⁰: Բայց այստեղ նախ իրականությունը ճիշտ չի ներկայացված, և ապա՝ մեր կարծիքով սխալ եզրակացություն է արված: Ճիշտն այն է, որ Ղ. Փարպեցին միայն «գեղեցիկ և հուզիչ» խոսք չի ասում նշված ժամանակաշրջանի մասին կամ պատմական տվյալներից զուրկ նկարագրություններ չի անում, այլ «մինչև Սահակ ընկած ժամանակաշրջանի» համար էլ օգտվում է պատմիչներից: Զխոսենք մեր անունից, բերենք անվանի բանասերներ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Մախասյանցի բառերը, որոնք վկայում են, թե Ղազար Փարպեցու պատմության այդ հատվածում «զետեղված է պատմական նյութը Արշակունյաց թագավորության բաժանումից մինչև Ս. Սահակի և Մեսրոպ Մաշտոցի մահը»։ ահա և շարունակությունը՝ «Առաջին մասը համեմատաբար քիչ բան ունի նոր, որ մեզ ծանոթ չլիներ ուրիշ աղբյուրներից. բացի Այրաքառյան դաշտի գեղեցիկ ու հետաքրքրական նկարագրությունից և Սահակի տեսիլքից»³¹: Այստեղ թեև այդ հատվածը ավելի լայն սահմաններում է դիտված, բայց նկատի է առնված նաև վերոնշյալ մասը: Ուրեմն Փարպեցու Պատմության հիշյալ հատվածում կան նաև պատմական փաստեր, որոնք մեզ հայտնի են մինչև այդ հատվածի գրառումը հեղինակված այլ աղբյուրներից, ըստ մեծի մասին Բուզանդի և հորենացու պատմություններից: Դրանք կարող են հայտնի լինել նաև բոլոր նրանց, որոնք կփորձեն համեմատել այս երկու հեղինակների համապատասխան երկերը: Այդպես են արել բանասերները և նոր միայն վստահությամբ գրել, որ Ղ. Փարպեցին օգտվել է նախորդ բոլոր պատմիչներից, որոնք մեզ այսօր արդեն հայտնի են:

Այսպես, օրինակ, շատերի թվում է. հալաթյանցը այս մասին գրում է. «հորենացի և Եղիշէ, որը գլխաւորագոյն աղբիւրք են Ղազարայ... հորենացայ առնու նա նիւթս վասն իւրոյ Պատմութեան՝ սկսեալ յաւարտմանէ Փաւստոսի դպրութեանց (ի 378 ամէ) մինչ ցվախճան սրբոց Սահակայ և Մեսրոպայ (յամի 440) ընդ բնաւն անցս 62 ամաց: Իսկ Եղիշէ միակ ևեթ աղբիւր նորին վասն Վարդանանց պատերազմին»³²: Գ. հալաթյանցի կողմից նույն տեղում տրված դուգահեռ ընդարձակ համեմատությունները կասկած չեն թողնում այս առթիվ³³:

Մ. Աբեղյանը ևս շատ որոշակի պնդում է, որ «կաշիւի չէ ասել, թե բացի հիշված երեք հեղինակներից ուրիշ պատմական երկեր ձեռքի տակ ունեցած չլինի Ղազարը», «Մ. հորենացին և Եղիշեն ծառայել են իբրև աղբյուր Ղ. Փարպեցուն»³⁴:

Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության լավագույն հետազոտողներից, նույնչափ էլ գիտակ Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոցին»՝ Վ. Նալբանդյանը հետևյալ ստույգ հաստատումն է տալիս. «Ղազար Փարպեցին... իր գիրքը շարադրելիս ձեռքի տակ ունեցել է Եղիշեի Վարդանանց պատերազմի նկարագրությանը նվիրված երկասիրությունը և օգտվել է նրա-

³⁰ Քանրեր համալսարանի», 1967, № 2, էջ 206:

³¹ Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Առաջաբան, էջ Բ:

³² Գ. հալաթյանց, Ղազար Փարպեցի եւ գործք նորիւ, Մոսկվա, 1883, էջ 60:

³³ Նույն տեղում, էջ 61—63, 85—87:

³⁴ Մ. Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Ա, էջ 321:

նից: Այդ են վկայում, առաջին հերթին, նույնիսկ բառացի նմանությունները³⁵:

Հարկ չենք համարում այստեղ երկրորդել Գ. Խալաթյանցի, Մ. Աբեղյանի և այլոց զուգահեռ համեմատությունները (մենք կարող էինք նաև դրանց ավելացնել այլ հատվածներ), նախ, որովհետև անհրաժեշտության դեպքում ընթերցողը կարող է ինքը դիմել դրանց³⁶, և ապա՝ վերոհիշյալ բանասերներին հագիվ թե կարելի է հավատ չընծայել:

Ուրեմն, Փարպեցին նաև այդ հատվածի համար իրապես ունեցել է դրավոր աղբյուր և այդ առաջին հերթին Խորենացու Պատմությունն է: Նա նշված ժամանակաշրջանի մասին ամփոփ է խոսել ոչ այն պատճառով, որ աղբյուր չի ունեցել ձեռքի տակ, ինչպես կարծում է Խ. Թորոսյանը, այլ, ընդհակառակը, որովհետև աղբյուր է ունեցել, դրա համար էլ ավելորդ է համարել մանրամասն կրկնել արդեն արձանագրված փաստերը: Այնպես որ, բոլոր դեպքերում Փարպեցին ծանոթ է Խորենացու Պատմությանը և, ինչպես տեսանք, օգտվել է դրանից, և ոչ միայն դրանից: Ուստի հոգվածագրի առաջ քաշած այս 2-րդ կետն էլ քննության չի կարող դիմանալ:

Խ. Թորոսյանը, ինչպես արդեն նշեցինք, այս սերտ աղբյուր Խորենացու և Փարպեցու միջև փորձում է բացատրել 3-րդ աղբյուրով, որը, ըստ նրա, «Սահակայ պատմությունն» է³⁷: Բայց չէ՞ որ այդ աղբյուրը դեռևս չկա ու չկա, և ոչ ոք, այդ թվում նաև Խ. Թորոսյանը, մի բառ անգամ չի կարդացել դրանից: Իր խոսքը հաստատելու համար Խ. Թորոսյանը ոչ մի նյութական ճշմարտացի տվյալ չի բերում, եթե այդպիսի տվյալ ունենար, ինչ խոսք, չէր պահի գալիք «նեղ օրերից մեկի» համար: Ուստի այս ևս նրա կողմից սոսկ հայտարարություն է:

Անցնենք երրորդ կետին:

Քանի որ Փարպեցին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք չկան Խորենացու մոտ, ուրեմն, ըստ հոգվածագրի, նա: օգտվել է մի այլ աղբյուրից, որը և հենց «Սահակայ պատմությունն» է:

Որ մի այլ աղբյուրից օգտվել է Փարպեցին՝ այդ հայտնի է, բայց որ այդ աղբյուրը «Սահակայ պատմությունն» է, դեռ չգիտենք: Ոչ ոք չի ասել, և Խ. Թորոսյանն էլ այժմ իրավունք չունի ասելու, որ այդ ճշմարիտ է, որովհետև նա ևս փաստեր չունի, իսկ առանց հիմնավոր փաստերի մնացած ամեն ինչ տվյալ դեպքում գուշակություն է:

Ճիշտն այն է, որ.

Ա. Հաղար Փարպեցին օգտվել է նաև բանավոր աղբյուրներից, «Ի ստույգ գիտողաց» և ոչ թէ միայն «գրողաց», ինչպես ինքն էլ է վկայում և ինչպես ապացուցել են շատ անվանի բանասերներ³⁸, որոնց մասին խոսք եղավ քիչ վերը:

Ի. Խորենացու և Փարպեցու միջև ընկած է մի այնպիսի ժամանակամիջոց, որը լիովին կբավարարեր, որ այդ բանավոր աղբյուրները փոփոխվեին և ունենային իրենց սարբերակները:

35 Վ. Նալբանդյան, Եղիշե, Երևան, 1959, էջ 43—44:

36 Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 61—63, 85—87:

37 «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 206:

38 Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 60: Մ. Աբեղյան, նշվ. աշխ., Ա, էջ 321: Վ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 43—44:

Գ. Խորենացին և Փարպեցին տարբեր մարդիկ են, անհատական տարբեր խառնվածքով և գրելու իրենց ուրույն ձևերն ու նպատակներն ունեն։

Մի՞թե այսքանը բավական չէր լինի, որպեսզի Խորենացու և Փարպեցու միջև, այնուամենայնիվ, տարբերություններ լինեին, էլ ինչո՞ւ «մեղքը գցել» «Սահակայ պատմութեան» վրա, երբ, մանավանդ, հողավածագիրն այդ ստուգելու միջոց չունի։ Չէ՞ որ «Սահակայ պատմութիւնից» առ այսօր մեզ ոչինչ չի հասել։

Հայտնի է, որ Փարպեցու և Խորենացու նշված տարբերությունն այն է, որ առաջինը ավելի է մանրամասնում տարբեր անձնավորությունների միջև տարվող զրուցակցությունը և Սահակ Պարթևի «Ճառերը», մինչդեռ Խորենացին համառոտակի է շարադրում պատմական փաստը։ Մեր կողմից վերը նշված պատճառները ևս բավարար են այդ տարբերությունը բացատրելու համար, սակայն ավելի լավ է, որ դիմենք ամենահավաստի միջոցին և թողնենք, որ այդ մասին իր որոշակի խոսքն ասի հենց ինքը՝ Խորենացին. «Բայց թէ ասիցէ որ, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտացէ, զի ոչ յումեմէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն նշմարտութեամբ և ոչ մեմ ի պատմութեանս հիսել հաւանիմք (ընդգծումը մերն է—Փ. Ա.)»³⁹, Երբ Խորենացին ինքն իր մասին այսպես է վկայում, ավելորդ են այլևս մեր օրերի այդ առիթով գրառված բոլոր հակադիր դատողությունները։ Նա խոստովանում է, որ Սահակ Պարթևի մասին իր աղբյուրները, որոնք պատմում են նրա «հրապարակախօսութեան» մասին, այսինքն պարսից դռան և նախարարների առաջ արտասանած խոսքերի վերաբերյալ, եղել են բանավոր և ինքը ոչ ամեն ինչ է, որ «հիւսել» է իր Պատմությանը։ Ուրեմն նա «Սահակայ պատմութիւնից» չի օգտվել, եթե օգտվեր, վերոբերյալը չէր գրի։ Չէ՞ որ նա Մեսրոպ Մաշտոցի մասին նման բան չի ասում։ Ինչո՞ւ։ Որովհետև Կորյունի «Վարք Մաշտոցին» ունեցել է ձեռքին և օգտվել է դրանից⁴⁰։

Այսպիսով, այս երրորդ կետն էլ զուրկ է հիմքից և օգտակարությունից։ Ուստի չի կարելի ասել, որ Փարպեցին չի օգտվել Խորենացուց և, մանավանդ, չի կարելի ստույգ գրել և գրածն այնուհետև ընդգծել, թե իբր «Խորենացին ու Փարպեցին օգտվել են ոչ թե մեկը մյուսից, այլ, իրարից անկախ, մի երրորդ աղբյուրից և դա «Սահակի պատմությունն» է, ճիշտ այնպես, ինչպես որ նրանք իրարից անկախ օգտվել են «Մաշտոցի պատմությունից», ինչպես և «ճիշտ է նրա (Փարպեցու—Փ. Ա.) Պատմությունից բխող եզրակացությունն այս մասին, թե ինքը Խորենացու Պատմությանը ծանոթ չէ»⁴¹։

Մեր կարծիքով, հողավածագրի միտումներին այսօր օգտակար ոչինչ չունեն ավելացնելիք տասնյակ տարիներ առաջ բանասիրության մեջ արված ենթադրությունները ևս, որոնք նա վկայակոչել է. Այսպես, օրինակ, նա կարծում է, որ եթե IX դարի մատենագիր Ահարոն Վանանդեցին իր օգտագործած աղբյուրների շարքում հիշում է V դարի աղբյուրներ և Սահակ Պարթևի «Վարքը», ապա, ուրեմն, այդ «Վարքը» ևս V դարի գործ է⁴², իսկ ինչո՞ւ ոչ VI, VII

39 Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 353։

40 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 321։ Հ. Աճառյան, Ս. Մեսրոբի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը, 1907, Բարիզ, էջ 19։

41 «Բանբեր համայնարանի», 1967, N 2, էջ 298։

42 Նույն տեղում, էջ 266։

Վ III կամ նույնիսկ IX դարի գործ: Դժբախտաբար, Խ. Թորոսյանը միայն այստեղ է որոշում լուել: Եթե այդպես դատեն բանասերները, կարելի է պատկերացնել, թե ինչ կստեղծվի բանասիրության մեջ, քանի՜ քանի հեղինակներ կվազվզեն ժամանակի «զանազան երթուղիներով»:

Նրա հաջորդ «ապացույցը» հետևյալն է: Վերոգրյալ Ա. և Բ. «բնագրերից» (Սոփերքում և ապա մեր կողմից «Բանբեր մատենադարանի» մեջ լույս ընծայված վերոհիշյալ տարբերակները) մեկի մեջ ասված է, որ Սահակ Պարթևի Մեսրոպ Մաշտոցի և թարգմանիչների վարքերը շարադրված են այնպես, ինչպես կա «ի կատարեալ պատմութեանն նոցա», մյուսի մեջ՝ «որպէս և յայտ է ի պատմութեանց նոցա»: Եվ այս առիթով քննարկվող հոդվածում ոչ ավելի և ոչ էլ պակաս եզրակացված է. «Դրանցից (պատմություններից — Փ. Լ.) մեկը «Մաշտոցի վարքն» է, մյուսը, բնականորեն, «Սահակի վարքը»⁴³: Բայց ինչու միայն ու միայն այդպես: Զե՞ որ և թե «ի կատարեալ պատմութեանն նոցա» խոսքի վրա հիմնվենք, պիտի նկատի ունենանք «Վարք Մաշտոցին», իսկ եթե «ի պատմութեանց նոցա» խոսքը նկատի ունենանք, ապա ինչու միայն տվյալ երկու «Պատմությունը» պիտի հիշենք և ոչ մի շարք պատմություններ: Մի՞թե հոդվածագիրն հայտնի չէ, որ մեր ձեռագրերում Սահակ Պարթևի, ինչպես նաև Մեսրոպ Մաշտոցի մասին կան այդ «մի շարք» պատմություններ: Եվ մի՞թե հիշյալ տարբերակների հեղինակը այդ խոսքը չէր կարող ասել նաև մեր մյուս պատմիչների երկերը նկատի ունենալով: Ուրեմն, էլ ինչու՞ դրանցից չէր կարող օգտվել նա: Կարող էր և օգտվել է:

Բայց Խ. Թորոսյանը, համենայն դեպս, շարունակում է և մինչև իսկ ավելի առաջ դնում՝ թե իբր «Ձեռագրական որոշ տվյալների հիման վրա կարող ենք նույնիսկ ասել, որ Փարպեզին ևս վկայում է, թե օգտվել է «Սահակի պատմություններից» (ընդգծումը մերն է — Փ. Լ.)⁴⁴: Ինչու՞: Որովհետև Մաշտոցի անվ. Մատենադարանի № 993 ձեռագրում կա Փարպեցու Պատմության մի հատվածը, որտեղ խոսվում է Սահակ Պարթևի ծննդյան և մահվան օրերի համապատասխանաբար «նույնը» լինելու մասին և ավետեղ չի նշված «Կորեան» անունը իբրև աղբյուր: Սույն հատվածից հոդվածագրի մեջ բերած մասում ասված է այսպես. «Որ և զաւր ծննդեան երանելւոյն ի ստոյգ զիտողաց և ի պատմութենէ առն սրբոյ հաստատեալ Պրեցաք զաւր ծննդեան սրբոյն Սահակայ ի նմին ամսեանն լինել»⁴⁵: Բայց այս խոսքերը բացառում են տվյալ տեղեկության Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքից քաղված լինելը: Ինչու՞ «ի պատմութենէ առն սրբոյ» արտահայտությունը չի թվում, թե ակնարկություն է «Վարք Մաշտոցի» մասին: Շատ ակնհայտ է, որ «առն սրբոյ» խոսքերն ասված են Կորյունի համար: «Երանելւոյն» և «առն սրբոյ» բառերը սոսկ մակդիրներ չեն այստեղ, այլ մի տեսակ «անձնավորված» են, փոխանունաբար կիրառված: Եթե, ինչպես հետևում է հոդվածագրի բացատրությունից, դրանք դարձել են միևնույն ենթական (Սահակ Պարթևը — Փ. Լ.) ներկայացնող դոյականներ, ապա ճիշտ կլինե՞ր դրանց կողքին դնել նաև «սրբոյն Սահակայ» բառերը: Ընդամենը երեք կարճ տողից բաղկացած մի վտիտ նախադասության մեջ վերոնշյալ երկու «անձի առումով» դործածված բառերի կողքին երրորդը՝ «սրբոյն

⁴³ Նույն տեղում, էջ 207:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

Սահակայ» ավելացնելը հազիվ թե պատշաճեր V դարի հեղինակ Փարպեցու լեզվին: Խ. Թորոսյանը փորձել է թարգմանել այդ նախադասությունը, բայց տեսնելով, որ իր բացատրած կամ հասկացած իմաստով թարգմանելը «չի ստացվում», կիսատ է թողել: Ահա նրա թարգմանությունը. «Որ և երանելու ծննդյան օրը ստույգ գիտեցողներից և սուրբ մարդու պատմությունից հաստատելով գրեցինք»⁴⁶: Ո՞ւր է շարունակությունը....:

Բայց թողնենք այդ: Ինչո՞ւ չենթադրել, որ «Կորեան» բառը ընկել է, թեև եթե նույնիսկ բոլորովին էլ այն տվյալ տեղում չի եղել և մուծվել է հետագայում, որ հավանական չէ, ինչպես պիտի տեսնենք, նշանակում է մուծողը ճիշտ է հասկացել նշված պարբերությունը և կատարել է «Կորեան» անհրաժեշտ լրացումը, ելնելով միաժամանակ համապատասխան իրական փաստից:

Իսկ ո՞րն է այդ իրական փաստը:

Խ. Թորոսյանը վերոնշյալ հատվածի իր բերած մասը ներկայացնելով իբրև «ձեռագրական» վկայություն, որը, ի դեպ, միակն է այդ հավակնությամբ, ընդգծում է երեք հանգամանք.

1. Մաշտոցի անվ. Մատենադարանի № 993 ձեռագիրը, որից ինքը վերցրել է իր կիսատ բերած պարբերությունը, 1456 թ. գրչագիր է, մինչդեռ Փարպեցու Պատմության Ս. Մալխասյանցի և Գ. Տեր-Մկրտչյանի կողմից հրատարակված քննական բնագիրը կազմված է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2639 ձեռագրի հիման վրա, որը 1672 թ. ընդօրինակություն է: Առաջին ձեռագիրը ավելի քան 200 տարի վաղ է ընդօրինակված երկրորդից, ուստի այն ավելի հեղինակավոր և ծանրակշիռ խոսք ասելու իրավունք էլ ունի⁴⁷:

2. Այն ընդարձակ հատվածը, որից ինքը քաղում է նշված պարբերությունը, կա բազմաթիվ ձեռագրերում, «մեծ մասա՞բ ճառընտիրներում», որոնցում «Սահակի ծննդյան ու մահվան օրվա մասին հատվածը բոլորովին այլ (վերոհիշյալ քննական բնագրի համեմատությամբ — Փ. Ա.) ընթերցում ունի՝ չկա Կորյունի անունը»⁴⁸:

3. Այստեղ Փարպեցին «վկայում է, թե օգտվել է «Սահակի պատմությունից»⁴⁹:

Պատասխանում ենք այսպես.

ա. Իզուր է և դատապարտելի, որ № 993 ձեռագրի վաղեմությունը հակադրված է Փարպեցու Պատմության վերոգրյալ քննական հրատարակության հիմք ծառայած ձեռագրերին, որովհետև, չգիտես ինչու, մոռացության է տրված, որ այդ հրատարակության միակ հիմքը հիշյալ № 2639 ձեռագիրը չէ, կան նաև այլ ձեռագրեր, որոնցից մեկը՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1522 ձեռագիրը № 993 ձեռագրից ավելի հին է առնվազն 250 տարով: Իսկ թե ինչ է վկայում այդ XII դարի ձեռագիրը, մենք ցույց կտանք քիչ հետո:

բ. Միանգամայն իրական չէ Խ. Թորոսյանի երկրորդ փաստարկը ևս: Մենք դիմեցինք այդ «բազմաթիվ» ձեռագրերին, որոնք ճառընտիրներ են, և տեսանք, որ այն հատվածը, որից ինքը քաղում է նշված պարբերությունը, հիմնականում երկու ընթերցում ունի, որոնք և՛ իրար են նման, և՛ նման են Փար-

46 նույն տեղում:

47 նույն տեղում:

48 նույն տեղում:

49 նույն տեղում:

պեղու Պատմության վերույրյալ հրատարակության համապատասխան հատվածին: Ահա դրանց զուգահեռ համեմատությունը.

Ճ ա ո ը ն տ ի ր № 993	Ճ ա ո ը ն տ ի ր ե ե ր	Փ ա ր պ ե ց ի
(նույնն է նաև վերոհիշյալ № 1522 ձեռագրում, ինչպես կտեսնենք ստորև. միայն փոքր տարբերությամբ):	№ № 1524 (293ա), 4790 (250բ), 4676 (263բ)	Պատմութիւն հայոց, էջ 37
...Վախճանեցաւ խաղաղական հանգստութեամբ ըր զաւառին Բագրեանդայ, ի զեղն, որ անուանեալ կոշի Բլուր, ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի՝ որդու Վոսմայ Պարսից արքային, յամսեանն Նաւասարդի, որ ար լ(երեսուն) էր ամսոյն, յերկրորդ ժամու աւուրն, որ և զար ծընընդեան երանելոյն ի ըստոյդ զիտողաց և ի պատմութենէ առն սրբոյ հաստեալ զրեցաք զար ծընընդեան սրբոյն Սահակայ ի նրմին ամսեան լինելու...	...և ապա վախճանեցաւ երանելի սուրբ Հայրապետն խաղաղութեամբ հանգստի ի զաւառին Բագրեանդա, ի զեղն, որ կոշի Բլուր, ի սկիզբն ամին երկրորդի Յազկերտի՝ որդոյն Վոսմա պարսից արքային, յամսեանն Նաւասարդի, որ ար լ(երեսուն) էր յերկրորդ ժամու աւուրն, որ և զար ծնընդեան երանելոյն ի ստոյգ զիտողաց և ի պատմութենէ առն սրբոյն լ հաստատեալ զրեցաք, զար ծնընդեան սրբոյն ի նմին ամսեան եղեալ:	...Վախճանեցաւ խաղաղական հանգստի ի զաւառին Բագրեանդայ, ի զիւղն, որ անուանեալ կոշի Բլուր, ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի՝ որդոյ Վոսմայ թագաւորին Պարսից. յամսեանն Նաւասարդի, որ օր երեսուն էր ամսոյն, յերկրորդ ժամու աւուրն, որ և լօր ծննդեան սրբոյն ի ըստոյգ զիտողաց և ի Պատմութենէ երանելոյ առն Կորեան՝ հաստատեալ զիսացաք լինել նոյն օր և ծննդեան սրբոյն, ի նմին ամսեան:

Այստեղ, չհաշված շնչին շեղումները, նմանությունն ու նույնությունն ականհայտ են: Առավել ականհայտ է սակայն մի ուրիշ հանգամանք, որ այս երեք նմուշներն էլ բխում են միևնույն սկզբնաղբյուրից՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից: Բայց այս արդեն հակադարձ համեմատական է հոդվածագրի այս միևնույն պարբերությունից խլված եզրակացությանը: Ո՞րն է նշանը:

Մենք բերեցինք № 993 ձեռագրի այն հատվածը, որը հ. Թորոսյանն ընթերցել է ամենայն ուշադրությամբ, բայց, ինչպես ասացինք և ինչպես պիտի տեսնենք քիչ հետո, ինքը կիսում է այն և քաղում է միայն վերջին երկու-երեք տողը: Ինչ, խոսք, բանասիրության մեջ պարտադիր չէ որևէ պարբերություն մեջ բերել ամբողջությամբ, բայց այն խեղաթյուրելը խստիվ արգելվում է: Այստեղ, ցավոք, առանց մեղքի չէ նաև մեր հոդվածագիրը, որովհետև կամավոր կերպով զեղչել է, չի բերել այն տողերը, որոնք բառացի քաղված են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից⁵⁰: Ինչո՞ւ: Որպեսզի «կարողանար» (եթե միայն կարողանար) այդ հիման վրա բացատրել հիշյալ հատվածի և Կորյունի երկի փոխադարձ առնչությունը, ապա Փարպեցու մտքով իսկ շանցած մի «վկայություն» վերագրեր հենց Փարպեցուն, իբր նա «վկայում» է, թե օգտվել է «Սահակի պատմությունից», հետո էլ այս «ուղիղ» գծով հասնել այն բանին, որ գրեր, թե «Սահակայ վարք» է գտել: Բայց... ինչպես տեսանք վերը, այդ հատվածի իր կիսատ բերած մասով էլ բացառել, ուրանալ Կորյունին, անհնար է և, եթե ամեն կերպ հավատալինք հոդվածագրին. չստուգելինք իր իսկ օգտագոր-

50 նույն տեղում, էջ 208:

ծած աղբյուրները և հիմնվելին՝ նրա բերած «փաստի» վրա, դարձյալ մենք չէինք կարող երբևէ ընդունել, որ նրա վերոհիշյալ եզրակացությունները անհիմն չեն:

Եթե, իրոք, հողվածագիր *Խ. Թորոսյանը* համեմատել է № 993 ձեռագրի հիշյալ հատվածը Կորյունի «Վարք Մաշտոցի» համապատասխան հատվածի հետ (եթե չի համեմատել, իհարկե, ավելի վատ), ապա, անտարակույս, տեսել է հետևյալը.

Կորյուն «Վարք Մաշտոցի», էջ 87—88

Ճառընտիր № 993(228ա)

«...յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի, ...վախճանեցաւ խաղաղական հանգստեամբ որդոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից ի գաւառին Բագրևանդայ, ի գեղն, որ անուաշխարհին Բագրևանդ գաւառի, ի դիւղ Բլրոնեալ կոչի Բլուր, ի սկզբան ամին երկրորդիցաց, ի կատարեալ ամսեանն Նաւասարդի, որ Յազկերտի՝ որդոյ Վռամայ Պարսից արքային, պէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկյամսեանն Նաւասարդի, որ աւր լ(երեսուն) էր րորդ ժամու աւուրն...:

ամսոյն, յերկրորդ ժամու աւուրն, որ և զատ ծննդեան երանելոյն...:

Այստեղ ավելի քան որոշակի է բառացի կապը: Երկրորդը, որը միաժամանակ Փարպեցունն է, բխել է առաջինից: Որ այդ այդպես է, վկայված է ոչ թե XV, այլ XII դարի վերոհիշյալ № 1522 ձեռագրով, որտեղ կարդում ենք. «...որ և զաւր ծննդեան սրբոյն ի ստոյգ գիտողաց և և պատմութենէ երանելի առն Կորեան (ընդգծումը մերն է — Փ. Ա.) հաստատեալ գրեցաք լինել նոյն աւր ծննդեան սրբոյն ի նմին ամսեան»⁵¹:

Ուրեմն Փարպեցին այս հատվածը վերցրել է Կորյունից և եթե № 993 ձեռագրում «Կորեան» բառը չկա, այդ բոլորովին էլ չի նշանակում, որ Փարպեցին «վկայում է, թե օգտվել է «Սահակի պատմությունից»: Իսկ եթե անպայման ուղենանք նրա վկայությանը ծանոթանալ, ապա բավական է, որ բանանք նրա պատմության վերոգրյալ քննական հրատարակության 13-րդ էջը և կտեսնենք, թե նա շատ որոշակի, երկու անգամ հիշատակելով Կորյունի անունը, «վկայում է, որ օգտվել է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից և ոչ թե «Սահակայ պատմությունից»⁵²:

Հետևաբար *Խ. Թորոսյանն* իրավունք ունե՞ր այս 3-րդ կետից անմիջապես հետո եզրակացնելու. «Այսպիսով, թվում է, այլևս որոշ է, որ հինգերորդ դարում գրվել է «Պատմություն Սահակա», ճիշտ այնպես, ինչպես գրվել է «Պատմություն Մաշտոցի»⁵³: Իհարկե, ոչ:

Շարունակենք:

Խ. Թորոսյանը «Սահակի պատմությամբ» է բացատրում նաև մի կողմից Փարպեցու և մյուս կողմից Խորենացու և Կորյունի պատմությունների միջև եղած տարբերությունը: Այն, որ Պարթևի դերը V դարի մշակութային և դրական շարժման մեջ ավելի բարձր է գնահատված Փարպեցու կողմից, ըստ *Խ. Թորոսյանի* պետք է բխեցնել «Սահակին նվիրված հատուկ գործից»: Ահա թե ինչպես է դատում նա այս կապակցությամբ. «Այսպիսի միտում (իմա՝ Պարթևի

51 Մատենադարան, ձեռ. № 1522, էջ 13ա:

52 Ղ. Փարպեցի, Պատմություն հայոց, էջ 13:

53 «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 208: Ի դեպ, ընդամենը մի քանի տող հետո *Խ. Թորոսյանը* իր սույն եզրակացությունից նույնիսկ հանում է «թվում է» բառը և գրում. «Այսպիսով, արդեն պարզ է, որ հինգերորդ դարում գրվել է «Սահակի պատմությունը», որից օգտվել են Խորենացին ու Փարպեցին» (նույն տեղում, էջ 209):

ղերի բարձրացման — Փ. Ա.) բնական կլինելու Սահակին նվիրված հատուկ գործում, որի հեղինակը, համայնված իր հերոսով, նրան ավելի վեր է դասել կամ փոքր ինչ անցել ղզաստության սահմաններից»⁵⁴։ Նախ ասենք, որ նման գործի մեջ այդ կարգի միտումը պարտադիր չէ, և «վարք Մաշտոցի» մեջ էլ Մաշտոցը այնպես դիտավորյալ կերպով չի գերազնահատված, ինչպես Փարպեցու մոտ՝ Պարթևը, երկրորդ՝ մի՞թե Փարպեցին Պարթևին «վեր դասելու» ոչ մի այլ պատճառ ու միջոց չունենա։ Ունենա։

1. Ինչպես և. Թորոսյանն էլ գիտե, «Փարպեցին Վահան Մամիկոնյանի հովանավորյալն էր, իսկ վերջինս՝ Սահակի արյունակիցը»⁵⁵։

2. Փարպեցին հատուկ հրահանգ ու դիտավորություն ուներ «վեր դասելու» Մամիկոնյաններին ու նրանց գործը։

3. Փարպեցին և Խորենացին ու Կորյունը (նաև՝ Եղիշեն) տարբեր մարդիկ են և՛ իրենց խառնվածքով, և՛ իրենց հակումներով, ղեկավարն ու ղեմքերը գնահատելու իրենց չափանիշով, և՛ նույնիսկ, մասամբ, ժամանակով։

4. Փարպեցին և Խորենացին ունենցել են բանավոր տարբեր աղբյուրներ։

Քանի որ այս այսպես է, էլ ինչո՞ւ չմտածել, թե այս բոլորը միանգամայն բավական էր, որ Փարպեցին Սահակին այլ կերպ գնահատեր, քան Մաշտոցին։

Այնպես որ այստեղից էլ և. Թորոսյանը իրավունք չունի եզրակացնելու, թե իբր «պարզ է, որ հինգերորդ դարում գրվել է «Սահակի պատմությունը», որից օգտվել են Խորենացին ու Փարպեցին»⁵⁶։

Սակայն ևս մի խնդիր։ Քիչ վերջ մեջ բերինք Մ. Խորենացու վկայությունը այն մասին, որ Սահակ Պարթևի՝ Տիգրանին և հայ նախարարներին առնչվող գործունեության մասին իր աղբյուրները բանավոր են և «գրականղակ ճշմարտությամբ» չեն հաղորդում, ուստի և դրանք չի հյուսում իր պատմությանը։ Բայց ահա, դարձյալ իր պատմության մեջ, նա խոստանում է գրել առանձին գործ Պարթևի մասին։ «Ձու՛մ (Պարթևի մասին — Փ. Ա.) պարտ էր մեզ հեռաշփառագունի անցանել րանի, բայտ արժանի սրբոյ հօրն դրուատից, այլ զի մի՛ յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց՝ այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ քողցուի, արտաքոյ այսց զրոց (ընդգծումները մերն են — Փ. Ա.), ուր զսկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն»⁵⁷։ Հարց. եթե նախքան Մ. Խորենացին գրված լիներ «Սահակայ պատմութիւն», այնպես, «ինչպես գրվել է «Պատմութիւն Մաշտոցի», որտեղ Պարթևի ղերը բարձրացնելու «միտումը բնական կլիներ», էլ ինչո՞ւ նա պիտի ավելորդ անգամ ծրագրեր գրել նման մի գործ։ Չէ՞ որ նա այդպիսի ծրագիր չունի Մաշտոցի վերաբերյալ։

Ուստի, ղեռնա բոլորովին էլ «պարզ» չէ, «որ հինգերորդ դարում գրվել է «Սահակայ պատմութիւն»։

Կարծում ենք նաև, որ դուր է և. Թորոսյանը ավելորդ պատասխանատվություն վերցրել իր վրա ու գրել. «Սահակի պատմության» բովանդակության մասին մոտավոր պատկերացում կարելի է կազմել Խորենացու և հատկապես Փարպեցու պատմությունների և Ա. Բնագրի (Սովերբում հրատարակված տար-

⁵⁴ «Թանրեր համալսարանի», 1967, N° 2, էջ 298։

⁵⁵ Նույն տեղում։

⁵⁶ Նույն տեղում, էջ 209։

⁵⁷ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 355—356։

բերակը — Փ. Ա.) հիման վրա: Պետք է նկատի ունենալ նաև հայր Ահարոնի գործը»⁵⁸: Բայց, հետաքրքիր է, ինչո՞ւ հոգվածագիրը այսպիսով և ո՞չ մի տող ո՛չ համեմատում, ո՛չ էլ մատնացույց է անում: Ո՞ւր են այն հատվածները, տողերը կամ, թեկուզ, եզակի բառերը, որոնց «հիման վրա» կարողանար ընթերցողը «մոտավոր պատկերացում» կազմել «Սահակայ պատմութեան» բովանդակության մասին: Չկան: Որովհետև հոգվածագիրը թեև դրանք ջանադիր փնտրել է, բայց չի գտել:

Այժմ տեսնենք, թե Խ. Թորոսյանը ինչպես է որոնում «Սահակայ պատմութեան» հեղինակին, ինչպես է նրան գտնում ու մեղ էլ հայտնում ի գիտություն:

Նրա առաջին գործը լինում է այն, որ մերժում է Բ. Սարգիսյանի կարծիքն այն մասին, որ իբրև Լ. բնագրի հեղինակը կարող էր հորենացին լինել⁵⁹: Ապա նա բերում է Ալիշանի վկայությունը, ըստ որի «նաև ետին գարուց Նոր Զուղայի ձեռագրաց ցուցակի մը մեջ հայտնապես գրված է. «Խոսրովայ թարգմանչի պատմութիւն սրբոյն Սահակայ» և «Ազդարարից» նրա քաղած հետևյալ փաստը. «5. Խոսրով թարգմանիչ, որ է պատմութիւն սրբոյն Սահակայ Հայրապետին»⁶⁰: Խ. Թորոսյանը նաև նշում է, որ Մաշտոցի անվ. Մատենադարանի № № 2271 և 2220 ձեռագրերում պահպանված մատենագիտական ցանկում ասված է. «6. Խոսրով ևս թարգմանիչ է, որ է Պատմութիւն սրբոյն Սահակայ Հայրապետին»⁶¹: Իսկ այն, որ Խոսրովին ասում են «թարգմանիչ» ըստ հոգվածագրի, իբրև թե ցույց է տալիս, որ Խոսրովը V դարի անձնավորություն է: Խ. Թորոսյանը նաև հիշեցնում է, որ մեր պատմիչներից ոմանք ևս նրա անունը նշում են որպես հեղինակի⁶²:

Այս բոլորին կարելի է հետևյալ գնահատությունը տալ.

1. Ձեռագրացուցակներում և մատենագիտական զանազան ցանկերում ոչ ամեն ինչ պարտադրաբար ճիշտ է լինում: Քանի դեռ դրանք չեն ստուգված անհերքելի ապացույցներով, դրանց անվերապահորեն ճշմարիտ հայտարարելը բանասիրության մեջ մերժելի բայլ է:

2. Քանի որ բանասերներին, այդ թվում և Ալիշանին, վերը նշված բոլոր փաստերը գեռ շատ վաղուց էին հայտնի, բայց նրանցից և ոչ մեկը չհայտարարեց, թե ինքը գտել է «Սահակայ պատմութիւնը», որի հեղինակն է Խոսրով թարգմանիչը, ապա կարծում ենք, որ այդ փաստերը կարոտ էին շատ ավելի լուրջ քննության՝ նորահայտ, հատկապես բնագրական, տվյալների հիման վրա:

3. «Թարգմանիչ» մակդիրը անպայման «մատնացույց» չի անում և չի կարող անել, թե նա, ում վերաբերում է այն, անտարակույս V դարի անձնավորություն է: Այդ դեպքում Վարդան Արևելցուն, որը քաջ հայտնի է իբրև XIII դարի մատենագիր, Խ. Թորոսյանը նույնպես պիտի «հինգերորդ դարի անձ» համարեր, քանի որ բազմաթիվ անգամներ մեր ձեռագրում ու մատենագրու-

58 «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 208:

59 Նույն տեղում, էջ 209:

60 Նույն տեղում, էջ 209: Ի դեպ Խ. Թորոսյանն այստեղ ծանոթացրում է, որ այս երկու վկայություններն էլ «հավանաբար ծագում են նույն նախադրափարից»:

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում, էջ 209, 210:

թյան մեջ նրան կոչել են «թարգմանիչ»։ Ուստի դարձյալ «միանգամայն պարզ» չէ, «որ «Պատմութիւն Սահակայ» երկի հեղինակը խոսքով թարգմանիչն է»⁶³։

Այնուհետև ի. Թորոսյանը, վերստին անդրադառնալով Ա բնագրին, կրկնում է իր քիչ վերը հայտարարած անհիմն եզրակացությունները այն մասին, թե իբր ընթերցողն արդեն տեսել ու հավատացել է, որ Հ. Դրասխանակերտցին է օգտվել Ա բնագրից, որ վերջինս կազմվել է ամենաուշը IX դարում «Սահակայ պատմութեան» հիման վրա և որ այն V դարի գործ չէ և այլն⁶⁴։

Մենք վերստին չենք անդրադառնում դրանց, քանի որ մեր տեսակետն ու պատասխաններն այս առիթով արդեն շարադրել ենք վերը, բայց չենք կարող չընդգծել ու վերստին շեշտել ի. Թորոսյանի այն առավել համարձակ, նույնչափ էլ չպատճառաբանված ու չհիմնավորված պնդումը, ըստ որի «Անանունր (Սոփերքում հրատարակվածի կարծեցյալ հեղինակը — Փ. Ա.) հինգերորդ դարում գրված «Սահակի պատմությունից» ամբողջ հատվածներ վերցրել և նույնությամբ տեղադրել է իր գործում» (ընդգծումը մերն է — Փ. Ա.)⁶⁵։ Ու չենք հասկանում, թե երբ հիմքը չկա և չկան նույնիսկ նրա հետքերը, ինչպե՞ս կարելի է «կառուցում» կատարել։ Խոսվում է հալարավոր տողերի ծավալ ունեցող մի բնագրի մասին և բացարձակ վստահությամբ հավաստվում, որ այն կազմվել է մի այլ բնագրի հիման վրա, բայց, կրկնում ենք, երբ դեռ ոչ ոք, ոչ էլ հոգվածագիրը, և ոչ մի տող չի ընթերցել «օգտագործված» բնագրից։

Այստեղից ինքնաբերաբար հարց է ծագում. ի՞նչ միջոցներով է հոգվածագիրը իմացել ու մեզ էլ հրամցնում է ի գիտություն, որ Ա բնագրի հեղինակը Պարթևի այդ դեռ չծնված կամ էլ ծնված ու դեռ լույս աշխարհ չեկած «Պատմութիւնից» «ամբողջ» հատվածներ է ղետեղել իր գործում։ Ոչ միայն այսքանը. ի. Թորոսյանը դույզն ինչ կասկած չունի, որ այդ հատվածները նույնիսկ «նույնությամբ» են քաղված հիշյալ բնագրից, ինչ փուլթ, թե սույնը ճշտելու համար համեմատության երկրորդ եզրը չկա և ոչ մի տեղ, ոչ էլ իր հոգվածում։ Այս առթիվ հոգվածագրի միակ քայլը տողատակ տված հետևյալ ծանոթությունն է. «Շատ հավանական է, որ Ճառընտիրներում և այլ ձեռագրերում հանդիպող այս «Տեսիլք Սահակայ...» գործը, որը համապատասխանում է Փարպեցու պատմության քննական հրատարակության 19—33 էջերին և որը գրիչները անվանում են «Պատմութիւն Սահակայ», իրոք, քաղված է (կրճատումներով և փոփոխություններով) V դարում գրված «Սահակայ պատմութիւնից»։ Այս ենթադրությունը հաստատող բավարար վաստիւր կան»⁶⁶։

Նախ՝ քաջ հայտնի է, որ բանասիրության մեջ առ այսօր «Սահակայ տեսիլքի» նշված բնագրի մասին տիրող կարծիքը այն է, որ, ամենայն հավանականությամբ, այն շատ ավելի ուշ շրջանի գործ է, քան Փարպեցու Պատմությունը⁶⁷։ Երկրորդ՝ դեռ հայտնի չէ, որ այն «իրոք քաղվածք է... V դարում գրված «Սահակայ պատմութիւնից» և հայտնի չէ, որ V դարում գրվել է «Սահակայ պատմութիւն»։ Երրորդ՝ ի. Թորոսյանի «այս ենթադրությունը հաստա-

⁶³ Նույն տեղում, էջ 209։

⁶⁴ Նույն տեղում, էջ 210։

⁶⁵ Նույն տեղում։

⁶⁶ Նույն տեղում, էջ 207։

⁶⁷ Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 120—130, հատկապես՝ էջ 126—127։ Մ. Գարազյան, Քննական պատմութիւն հայոց, Գ, էջ 919։ Ն. Ակիւնյան, Տեսիլք Սահակայ, Վիեննա, 1948, էջ 10, 13, և ուրիշներ։

տող փաստեր կան» արտահայտությունը սոսկ հայտարարություն է: Մի՞թե «բավարար» փաստերից գոնե մեկը չէր կարելի բերել: Որևէ նմանություն ենթադրում է համեմատություն. երբ վերջինս չկա, առաջինի մասին, մանավանդ գիտության համար և գիտության անունով խոսելը դիտական չէ:

Այսպիսով, Խ. Թորոսյանի հոդվածի 8 կետից բաղկացած եզրակացությունները⁶⁸ բոլորն էլ, մեր կարծիքով, զուրկ են իրական փաստական հիմքից:

Այնուամենայնիվ, հասկանալի չէ, թե ինչո՞ւ Խ. Թորոսյանը Պարթևի մասին եղած բազմաթիվ պատմությունները թողած կանգ է առել Սոփերքի և «Բանբեր Մատենադարանի» մեջ լույս տեսած վերոհիշյալ բնագրի վրա: Չէ՞ որ այն որևէ «Սահակայ պատմութիւն» իսկ չէ, Պարթևի մասին էլ չէ, այլ ներբող է, այս բառի ամենալայն իմաստով, որտեղ գործող անձերից ամենաքիչը խոսք է լինում Պարթևի մասին և այդ խոսքն էլ եկամուտ մասով մեզ հիմնովին հայտնի է մեր պատմիչներից:

Եթե, այնուամենայնիվ, Խ. Թորոսյանը որոշել էր «Սահակայ պատմութիւն» «հայտնագործել», դրա համար երբեք էլ կարիք չունեի դիմելու սույն բնագրին և միայն սույն բնագրին, այլ, ընդհակառակը, թերևս Պարթևի այն բազմաթիվ, մասամբ նաև բազմազան վարքերին կամ պատմություններին, որոնք առկա են մեր ձեռագրերում: Այս դեպքում էլ, իհարկե, միայն այն բանից հետո, երբ նրան հայտնի կլինեի որևէ դեռ չհրատարակված կամ թեկուզ և տպագիր համապատասխան մի բնագիր:

Տեղին է ընթերցողին հիշեցնել նաև հետևյալը. Խ. Թորոսյանը «տողատելով» սույն բնագրից մի հատված, տողատակում այսպիսի ծանոթագրություն է թողել. «...Այն (տողատված հատվածը—Փ. Ա.) որպես բանաստեղծություն առանձնացրել ենք մենք, տողատումը ևս մերն է, որի վերջնականության վրա չենք պնդում: Երականագետների ուշադրությանը ներկայացվող այս գործը վաղ միջնադարյան մեր բանաստեղծության եզակի նմուշներից է...»⁶⁹: Որ այս բնագրում «բանաստեղծական մտածություններ կան», Հ. Աճառյանը նշել է դեռ 1907 թ.⁷⁰, իսկ մենք 1964 թ. այդ մասին իմիջիայլոց գրել ենք հետևյալ տողերը. «Հեղինակի բանաստեղծական ղեղումները և տրամության, և ցնծության ժամերին հաճախ են զգացնել տալիս իրենց ներկայությունը: Ընթերցողը այս իրողությունը կաբող է նկատել առանձնապես՝ ուրոշ հատվածներում, ուրտեղ հեղինակի խոսքն ուղղակի փոխվում է շափածո բանաստեղծության (ընդգծումը մերն է — Փ. Ա.): Ներբողն ամբողջությամբ տողորված է բանաստեղծական ջերմ շնչով, հայրենասիրական ներհուն թախիծով, բուռն հույզերով ու լավատեսությամբ...»⁷¹: Եվ ապա տվել ենք այդ հատվածներից մեկից մի նմուշ, որը ոչ միայն շափածո է և տողատված, այլև հանգավորված⁷²: Այստեղից հետևություն. արդյո՞ք Խ. Թորոսյանը ուշացած չէ իր «հայտնագործության» մեջ:

68 «Բանբեր համալսարանի», 1967, № 2, էջ 211:

69 Նույն տեղում, էջ 204:

70 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 24—28:

71 Փ. Ա. Ն. Թարյան, Վարդան Արևելցու ներբողը՝ նվիրված հայոց գրերի գյուտին, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 375—376:

72 Նույն տեղում, էջ 373:

Այս բոլորից եզրակացություն. «Սահակայ վարքի» մասին ինչ եղել է բանասիրության մեջ իս. Թորոսյանի սույն հոդվածից առաջ, մենում է անփոփոխ: Այժմ էլ ոչ այդ վարքն է հայտնաբերված, ոչ ստուգապես նրանից մի բառ է ընթերցված և ոչ էլ հաստատված է, որ այդպիսի գործ իսկապես գրվել է:

О «ЖИТИИ» СААКА ПАРТЕВА И ЕГО АВТОРЕ

П. П. АНТАБЯН

(Резюме)

Существует мнение, что в V в. было написано «Житие» Саака Партева, однако нет определенных фактов, подтверждающих это предположение.

В статье, наряду с обсуждением этого вопроса, одновременно рассматривается ряд проблем историко-филологического характера, касающихся памятников армянской литературы V в. Автор приходит к выводу, что «Житие» Саака Партева еще не обнаружено и не доказано, что в V в. такой труд действительно был написан.